ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի ուղերձը տեղական ինքնակառավարման մարմինների օրվա կապակցությամբ

Սիրելի՛ հայրենակիցներ, հայկական տոնացույցում նոյեմբերի 10-ը նշվում է իբրև տեղական ինքնակառավարման մարմինների օր, որն ինքնին կարևորում է տեղական ինքնակառավարման դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական եւ հասարակական-քաղաքական կյանքում: ՏԻՄ համակարգը մեր անկախ պետականության առաջնային ձեռքբերումներից է և պետական ու հասարակական կարևոր գործոններից մեկը:

Այսօր, երբ Հայաստանի Հանրապետությունը նոր շնչառությամբ է ապրում, երբ նոր իրավիճակ է ստեղծվել երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքում, երբ հայ ժողովուրդն իր կամքով ու վճռականությամբ տեր է կանգնել իր իրավունքներին, առավել իմաստալից է տեղական ինքնակառավարման մարմինների օրվա խորհուրդը: Հենց տեղական իշխանությունների միջոցով են քաղաքացիները իրացնում իրենց ամենօրյա կյանքի որակը բարելավող խնդիրների լուծմանը մասնակցելու, համայնքի շահերը պաշտպանելու ձայնի իրավունքը: Եվ որքան ամուր ու ներդաշնակ են համայնքի բնակիչ-տեղական ինքնակառավարման մարմին հարաբերությունները, այնքան տեսանելի են ձեռքբերումները, այնքան մեծ է վստահությունը պետական իշխանության հանդեպ:

Համոզված եմ, որ տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմամբ ի զորու ենք հաղթահարել բոլոր խոչընդոտները, լուծել բոլոր խնդիրները, ունենալ ավելի հարմարավետ ու զարգացած համայնքներ և ավելի բարեկեցիկ հայրենիք:

Վերստին շնորհավորում եմ տեղական ինքնակառավարման համակարգը ներկայացնող բոլոր հայրենակիցներին, ողջ հանրությանը: Մաղթում եմ առողջություն, բարեկեցություն եւ հաջողություններ ՝ ի շահ մեր երկրի յուրաքանչյուր համայնքի և մեր պետության հզորացման: